

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29/09/2017թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Ապահովադիր)՝ ի դեմս **աշխատակազմի ղեկավար Նելսոն Զուլոյանի** մի կողմից, և **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը** (այսուհետ՝ ապահովագրող)՝ ի դեմս **գործադիր տնօրեն Արսեն Հակոբյանի** մյուս կողմից, հետագայում երկու կողմերը միասին կանվանվեն «Կողմեր», կնքեցին միմյանց միջև կնքված և 2017թ. հոկտեմբերի 01-ից ուժի մեջ մտնող սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. Կողմերը համաձայնվում են Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
 - 1.1. Պայմանագրի N 2 Հավելվածում՝ Ապահովագրված անձանց ցուցակում, ընդգրկվում են նոր ապահովագրված անձինք՝ համաձայն Համաձայնագրի N 1 Հավելվածի,
 - 1.2. Նոր ապահովագրված անձանց ավելացմամբ պայմանավորված՝
 - 1.2.1. Պայմանագրի 5.2 կետում «122,350,000,000 ՀՀ դրամ» բառերը փոխարինվում են «129,210,000,000 ՀՀ դրամ» բառերով,
 - 1.2.2. Պայմանագրի 6.2 կետում է «116,968,371 ՀՀ դրամ» բառերը փոխարինվում են «123,584,401 ՀՀ դրամ» բառերով:
 - 1.3. Պայմանագրի N 3 Հավելվածը խմբագրվում է նոր բովանդակությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 2 Հավելվածի:
2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի ուժի մտնելու պահից և գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում:
3. Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, 0010, Արամի 3, 5
Հեռ.՝ + 374 60 54 00 00
Էլ. փոստ՝ statemedclaims@silinsuracne.net
ՀՎՀՀ՝ 02551341

**Գործադիր տնօրեն՝
Արսեն Հակոբյան**

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ

**Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն**

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3
Հեռ: +374 10 54-40-27
Էլ. փոստ՝ info@moh.am
ՀՎՀՀ 02507171

**ՀՀ առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավար՝
Նելսոն Զուլոյան**

Հավելված N 2
 Սոցիալական փաթեթի շահառուների
 առողջության ապահովագրության պայմանագրում
 փոփոխություններ եվ լրացումներ կատարելու վերաբերյալ
 29/09/2017թ. համաձայնագրի

«Հավելված N 3
 Սոցիալական փաթեթի շահառուների
 առողջության ապահովագրության պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

(ՀՀ դրամ)

Բաժինը, խումբը, դասը, ծրագիրը	Ծրագրի անվանումը	Վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինները և դրանց համապատասխան վերջնաժամկետները		
		մինչև նոյեմբերի 30-ը	մինչև դեկտեմբերի 25-ը	Ընդամենը տարի
07.03.01.04	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ	41,194,800	82,389,601	123,584,401

Ապահովագրող

Ապահովադիր

 (ստորագրությունը)

 (ստորագրությունը)